ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով **ծրագրային ապահովման կիրարկման ծառայությունների** ձեռքբերման նպատակով ձևավորված **ՀՀ ՔԿ ԳՀԽԾՁԲ-ԾԿ-26/2** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

07 հունվար 2026թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է. Գրիգորյան, Զ. Հունանյան, Վ. Մկրտչյան, Լ. Աթանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	*ծրագրային ապահովման կիրարկման ծառայություններ*	*720 000*

2. Տեղեկություն՝ հայտերի բացման և գնման ընթացակարգը սկսելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԳՀԽԾՁԲ-ԾԿ-26/2 ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետում: Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցեն*
1	«Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00144609, ՀՀ, ք. Երևան, Աբովյան 8, 2-րդ հարկ հեռ. 010-54-54-31, amakaryan@mediamax.am

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակցի առաջարկած գինը

Չափաբաժին 1՝ **ծրագրային ապահովման կիրարկման ծառայություններ**

հ/հ	Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ	600 000 /վեց հարյուր հազար/	120 000 /մեկ հարյուր քսան հազար/	720 000 /յոթ հարյուր քսան հազար/

5. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

5.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված հայտը արձանագրեց, որ ներկայացված փաստաթղթերում կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

5.1.1 **«Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից** ներկայացված Հավելված 2-ում (այսուհետ՝ Գնային առաջարկ) գրված ծածկագիրը չի համապատասխանում **ՀՀ ՔԿ ԳՀԽԾՁԲ-ԾԿ-26/2** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ծածկագրին, մասնավորապես մասնակցի գնային առաջարկում գրված է **ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԾԿ-26/2 ծածկագիրը**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ

կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԳՀԽԾՁԲ-ԾԿ-26/2** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.2-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց մերժել **«Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ**-ի ներկայացրած հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. 09.01.2026թ. Հանձնաժողովը որոշեց՝

6.1 **ՀՀ ՔԿ ԳՀԽԾՁԲ-ԾԿ-26/2** ծածկագրով մրցույթի միակ մասնակից «Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էլիզա Գրիգորյան

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Զավեն Հունանյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Վահագն Մկրտչյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Լուսինե Աթանյան

Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Նաիրա Բաբայան